



UNIVERSITÀ
CA' FOSCARI
VENEZIA

DIPARTIMENTO DI STUDI EURASIATICI



ՊՈ-ԱՐԱՔՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ASSOCIAZIONE CULTURALE PADUS-ARAXES

ՄԱՍԼՈՑ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇՈՒՔՈՎ ՏՕՆՈՒԵՑԱԻ ՎԵՆԵԿԻԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԽՏԱՅԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՅՔԻՆ 25-ԱՄԵԱԿԸ

13-15 Օգոստոսին պատշաճ շուրքով նշուեցաւ Վենետիկի Կա Ֆոսկարի Համալսարանի Հայ Լեզուի եւ Մշակոյթի ամանային խտացեալ դասընթացքին 25ամեակը: Հանդիսութեան պաշտօնական հիւրերն էին՝ ՀՀ Գիտութիւնների Ազգ. Ակադեմիայի Հումանիտար Գիտութիւնների և Հայագիտական Բաժանմունքի Ակադ. Քարտ. Պրոֆ. Վլադիմիր Բարխուդարեան, և Դոկտ. Յարութիւն Քիրքճեան, Աթէնքէն, գրականագետ և հեղինակ հայկական դասագիրքերու, որ նաեւ ակադեմական հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր: Ուրիշ հիւրեր եւս ժամաներ էին Վենետիկ՝ Իտալիայէն, Հայաստանէն, Ֆրանսայէն, Թուրքիայէն:

Շնորհաւորագրեր ուղղեր էին հետեւեալ եկեղեցական ու քաղաքական իշխանութիւնները. Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Ն.Գ.Տ. Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց, Տիար Գագիկ Յարութիւնեան ՀՀ Սահմանադրական Դատարանի Նախագահ, Տիկ. Յասմիկ Պողոսեան ՀՀ Մշակոյթի Նախարար, Տիար Արմէն Աշոտեան ՀՀ Կրթութեան Նախարար, Տիկ. Հրանդ Յակոբեան ՀՀ Սփիւռքի Նախարար, Տիար Ռուբէն Կարապետեան ՀՀ Իտալիոյ Դեսպան, Ակադ. Պրոֆ. Ռադիկ մարտիրոսեան ՀՀ ԳԱԱյի Նախագահ, Պրոֆ. Արամ Միմոնեան ԵՊՀ-ի Ռեկտոր, Պրոֆ. Հենրիկ Բախչինեան Տնօրէն Ե. Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի Թանգարանի, Դոկտ. Դաւիթ Սարգսեան Տնօրէն Ազգային Գրադարանի, Դոկտ. Լեւոն Անանեան Նախագահ Հայ Գրողների Միութեան, Պրոֆ. Վալենթինա Կալցուարի Նախագահ Հայագիտական Ուսմանց Միջազգային Ընկերակցութիւն, Պրոֆ. Էլիդէ Քաջիդեմտրիոյ Դեկան Կա Ֆոսկարիի Օտար Լեզուներու և Գրականութիւններու Ֆակուլտետին և Պրոֆ. Ջուլիանոյ Թամանի Տնօրէն Եւրասիական Ուսմանց Բաժանմունքին:

Հանդիսութիւնները բացուեցան 13 Օգ. Ուրբաթ կեսօրէ վերջ Մուրատ-Ռափայէլեան Վրժ.ի հոյակերտ Հայելիներու դահլիճին մէջ: Յետ ընթերցման հասած շնորհաւորագրերուն, Պրո-Ռեկտոր Պրոֆ. Էթթորէ Չինգանոյ ողջունեց ներկաները յանուն Ռեկտոր Պրոֆ. Կարլոյ Կառարոյի, շեշտելով արեւելեան լեզուներու կարեւորութիւնը Կա Ֆոսկարիի համար և հայերէնի մասնաւոր կարեւորութիւնը՝ նկատի առած Վենետիկի և Հայոց միջեւ ամէն տեսակի բազմադարեան կապերը: Յաջորդեց Պրոֆ. Բարխուդարեանի գնահատական բարձր խօսքը, նաեւ որպէս բանբեր հայրենի մտաւորականութեան և մշակութային կառոյցներուն, մանաւանդ ԳԱ-յի: Ապա բեմ եկաւ օրուան գլխաւոր բանախօս Դոկտ. Յարութիւն Քիրքճեանը որ, խօսելով փոխ ընդ փոխ հայերէն ու ֆրանսերէն, շեշտեց երկլեզուան մշակոյթի մը անհրաժեշտութիւնը արեւտեան սփիւռքին և յատկապէս արեւմտահայութեան համար: Հանդէսը փակուեցաւ Սոպրանոյ Ռոզին Թաշճեան Մանուկեանի (Փարիզ) և Բարիտոն Մկրտիչ Մկրտրչեանի (նախկին մեներգիչ Երեւանի Պետական Օպերայի, այժմ Փարիզ) համերգով, որոնց կ'ընկերակցէին դաշնամուրով Ջաստին Ռափաշոյի (Վենետիկ) և Լոռանս Անահիտ Մխիթարեան (Բրիսբէլ), որ նաեւ դասընթացքին կը հետեւեր: 14 Օգ. Շաբաթ իրիկուն, յոբելինական տօնակատարութիւնը շարունակուեցաւ պաշտօնական, միանգամայն մտերիմ ընթրիքի մը շուրջ, աւանդական թամադայական կարգով ու զինեձօներով: Այս առիթով՝ հրատարակուած երկու գիրքեր կը ներկայացնեն Դասընթացքի մասին 2005-2010-ի միջեւ լոյս տեսած մամուլի գրութիւնները և Պո-Արաքսի նպատակներուն և գործունէութիւններուն մասին ամբողջական, ամփոփ տեղեկութիւն մը:

Փակման հանդէսը տեղի ունեցաւ, 15 Օգոստոս Վերափոխման Կիրակին, Ս. Ղազարու Մայրավանքին մէջ, յետ միջօրէի առաջին ժամերուն, յետ Աբբայական Պատարագին և Միաբանութեան կողմէ հրամցուած սեղանին: Արծաթեայ յոբելոնանի հանդէսը սկսաւ՝ Դասընթացքին հիմնադիր ու վարիչ Հ. Լեւոն Զեքիեանի ուղերձով, որ շեշտեց Դասընթացքին նշանակութիւնն ու դերը ժամանակակից հայ մշակոյթի բեմախորքին վրայ, թէ՛ Հայաստանի և թէ սփիւռքի նկատմամբ, որպէս ներշնչուած հիմնապէս Մխիթարի տեսլականէն: Ապա տեղի ունեցաւ համերգ մը վերոյիշեալ արուեստագետներուն կարարմամբ, որոնց միացաւ այս առթիւ կազմուած և ընթացորդներէն բաղկացած երգչախումբ մը, Մաեստրոյ Մկրտիչ Մկրտրչեանի ղեկավարութեամբ: Երգերուն միջանկեալ, ներկաները վայելեցին հայ կրօնական և ժողովրդական մեղեդիներու դուդուկի նուագը, Երեւանի Պետական Կոնսերվատորիայի շրջանաւարտ Արամ Իփեքճեանի կատարումով:

Հայ Լեզուի և Մշակոյթի խտացեալ 25րդ դասընթացքը աւարտեցաւ Օգոստոսի 19ին: 2011-ի դասընթացքին արձանագրութիւնները կը բացուին 1 Դեկտեմբեր 2010-ին: Պայմաններու և ձեւակերպութիւններու մասին տեղեկատու շրջաբերականը մամուլին կը յանձնուի Նոյեմբերու կէսերուն:

